ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ

ՁԱՅՆԻՑ ԽՈՍՔ ԸՆԿԱԾ ՏԻՐՈՒՅԹԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայկական համատեքստը ոչ միայն իր մշտական ուշադրության կենտրոնում պահում է խոսքի նյութն իր զանազան դրսևորումներով, ինչը կատարվում է ինքնաբերաբար, այլև հաճախ հենց խոսքն է դարձնում տեքստի նյութ՝ երգ երգի մասին, խոսք խոսքի մասին տիրույթում: Ընդ որում՝ եթե համաշխարհային տեքստը այդ դեպքում հանդես է գալիս ծրագրային-տեսական դրսևորումներով, ապա հայկական համատեքստի առանձնահատկություններից մեկն այն է, որ խոսքի նկատմամբ ծրագրայնությունն ու տեսական մոտեցումը ոչ թե ուղղակի են ու առճակատ, այլ առավելապես թաքնված են տեքստային ենթաշերտերում՝ ներկայանալով բանաստեղծության բնական ոգով ու ոչ թե տեսական իմաստասիրությամբ:

Օրինակ՝ հայկական համատեքստի կենսական տարածքներից մեկում՝ Հովհաննես Թումանյանի տեքստում, հաճախ բանաստեղծության նյութ է դառնում **Ձայնից խոսք** ընկած տիրույթը՝ որպես **գոյությունը** (կյանքը, ձայնը) **քաղաքակրթական գոյության** ու կենսակերպի (խոսքի) հանգեցնելու աշխատանք ու ջանք:

Քաղաքակրթական գոյությունը ենթադրում է նախ մարդկային այնպիսի հանրություն, որը միասնական է **ձայնը** (որպես գոյության խորհրդանիշ) **խոսքի** (որպես քաղաքակրթական գոյության խորհրդանիշ) ոլորտ մղելու գործում: Այլ կերպ՝ Հովի. Թումանյանի և այդքանով նաև հայի լեզվամտածողության մեջ **գոյությունը միմիայն քաղաքակրթական լինելությունն** է: Եվ անպայմանական է այդ լինելության նախնական՝ Ձայնային (որպես Կենդանության նախապայման) հիմքը: Ձայնը, որպես Խոսքի, Բանի նախահիմք, անպայմանական է, որևէ պայմանի չի ենթարկվում, որովհետև Ձայնն է Կենդանության գրավականը և չի կարող բացակայել քաղաքակրթական լինելությունից: Այլ խնդիր է, թե ինչ ընթացք է ստանում ձայնի ընկալումը, քանի որ ձայն են և՛ աղմուկը, և՛ խոսքը:

Լինելությունն ըստ Թումանյանի միայն քաղաքակրթական կարող է լինել.

Ի՞նչ իմանաս Ստեղծողի գաղտնիքները անմեկին.-

Ընկեր տվավ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին. /էջ 24/[1]:

Ընկեր ունենալն ու այլ մարդկանց հետ կապված լինելը, մենակ չմնալն ու նույնիսկ սեփական անձի սահմանները խախտելու գնով ամենքի հետ լինելը քաղաքակրթական պայմանն է.

Բայց ո՞վ կըտա էն վայելքը՝ <u>ինքըս ինձ էլ չըզգայի,</u>

Ու հալվեի, ծավալվեի, <u>ամենքի հետ լինեի</u>.../էջ24/:

Եվ քաղաքակրթական լինելության թումանյանական պսակը՝ գրված 1918 թվականի փետրվարի 2-ին.

Լինե՞ր հեռու մի անկյուն,

Լինե՞ր մանկան արդար քուն,

Երազի մեջ երջանիկ,

Հաշտ ու խաղաղ մարդկություն /էջ21/:

Արարիչ - Ձայն - Գոյություն - Բան - Խոսք - Գիր - Անուն - Կյանք (քաղաքակրթական գոյություն, լինելություն) համընկալական շղթան միայն տեքստային բովանդակության տեսանկյունից չէ, որ ծառայում է քաղաքակրթական գոյություն-լինելությանը («Հաշտ ու խաղաղ մարդկություն»-ին): Բովանդակություն են ներխուժում (բառի դրական առումով) նաև լեզվամտածողական այս համակարգի խորհրդանիշները, որոնք նույնպես ձևավորում են ֆաբուլա՝ տեքստին հաղորդելով երկշերտ՝ *պատմական և վերպատմական* կառուցվածք, ակտիվացնելով և ուժեղացնելով տեքստի վերպատմական ընկալումը: Այդպիսի խորհրդանիշ է Ձայնը՝ որպես խոսքի, գրի, տեքստի նախնական վիճակ:

Ու՞ր կորան...

Մոտիկներս ու՞ր կորա՞ն,

Ինչքան լացի, <u>ձեն ածի՝</u>

<u>Ձեն չի տըվին. լու՞ռ կորան</u> /էջ18/ :

Սա նաև «անապատում կանչողի ձայնն է» կամ «անապատում կանչողի ձայնը» հենց սա է: Խնդիրը «ձեն ածի»-ին չէ, խնդիրն այն է, որ պատասխան «ձեն չտվին», ինչպես որ աստվածային խոսքը անապատային ամայության ու անարձագանքության մեջ զուր չպետք է հնչի:

Թեև Թումանյանն այս պահին ևս քաղաքակրթական գոյություն է փնտրում, բայց անխախտ է լեզվամտածողական համակարգի տրամաբանությունը. **Լռություն-Կորուստ-Մահ** լեզվամտածողական հոմանիշությունը հակադրված է **Ձայն-Խոսք-Կյանք (քաղաքակրթական գոյություն, լինելություն)** լեզվամտածողական հոմանիշությանը: Լռությունը, այսինքն՝ ձայնի բացակայությու-

1 Այս և մյուս մեջբերումները՝ հետևյալ գրքից՝ Հովհաննես Թումանյան, Երկեր, «Լույս» հրատ., 1980թ.

նը, մահն է, այդ պատճառով է, որ **Ձայնին Ձայնով** չպատասխանելը ոչ թե պարզապես **«կորան»** է դառնում, այլ, ուշադրություն դարձնենք, հատկապես ու անպայմանորեն՝ **«Լռ՛ռ** կորան»: Հայ ժողովրդի լեզվամտածողության մեջ դրված է պահանջը՝ «Ասողին լսող է պետք»: Այսինքն՝ ժողովրդի լեզվամտածողության մեջ **գոյությունը՝ կյանքը, հանգում է անպայմանորեն ու միմիայն քաղաքակրթական լինելության,** որի դեպքում ձայնը, խոսքը չի կարող անարձագանք մնալ, լինել անապատում կանչողի ձայն, գնալ և բախվել լռությանը՝ մահին. պարտադիր է լսողը, որի բացակայությունից է բողոքում Թումանյանի ծերունին, թե իրենցն ասում են ու քեզ չեն լսում («Հառաչանք»): Այսինքն՝ հայ ժողովրդի լեզվամտածողության մեջ **քաղաքակրթական գոյության, լինելության, կյանքի** երկու կողմերը **Ասողն ու Լսողն** են:

Խոսքը կարող է աղմուկի վերածվել, եթե չլինի լսողը: Աղմուկը ձայնի խելագարությունն է: Երբ Ասողին լսող չկա, ապա Ասողը նմանվում է խելագարի. դա գրեթե նույնն է, ինչ այն, երբ կա Լսողը, բայց այդպես էլ չի հայտնվում Ասողը: Գրիգոր Նարեկացին իր «Մատյանում» ոչ թե սրտի խորքից մենախոսում է, այլ իր սրտի մեջ, խորքում զրուցում է Աստծու հետ:

Լսողի առկայությունը **Ձայնը** մղում է դեպի **Խոսքի** ոլորտը, **Լսողի** բացակայությունը՝ **Ձայնը** գցում է **աննպատակայնության,** այսինքն՝ **զուտ լինելու,** հետևաբար՝ **աղմուկի** ոլորտը. **զուտ, ոչ տեղին, անտեղի ասված խոսքը** քաղաքակրթական ընկալման տիրույթում այդպիսով վեր է ածվում **աղմուկի:** Նույն ընկալման տիրույթում՝ **եթե լսողը չկա , ձայնը (խոսքը)** ինքն էլ վեր է ածվում **չեղած բանի,** իսկ **ձայնի չլինելը լռությունն է, մահը: Աղմուկը լսող չունի, իսկ Լռությունը չի լսվում** ինքնին: Այսպիսով՝ Աղմուկը և Լռությունը յուրաքանչյուրն իր հերթին քաղաքակրթական լինելության հականիշներ են, և հենց քաղաքակրթական լինելության հականիշներ լինելով՝ դրանք հոմանիշանում են. ուրեմն՝ Աղմուկը և Լռությունը չգոյության, չլինելու հոմանիշներ են:

Ահա թե ինչու «Լռեցի Սաքոյի» մեջ եղած աղմուկը՝

ա) «-Էստեղ է նա ,

-Հա՛, հա՛, հա՛, հա՛...» /էջ39/ ,

բ) «Տարա - նի - նա... տարա - նի - նա՛...» /էջ41/,

գ) «-Սաքո՛, Սաքո՛, մեզ մոտ արի...» /էջ40/,

դ) «Շըրը՛խկ...հանկարծ դուռը բացվեց,

Թուրք կանանցով տունը լցվեց...» /էջ40/,

ե) «-Ինձ մոտ արի՝ ձըվածեղ անեմ» /էջ40/,

զ) «Տունը լցվեց թուրք կանանցով,

ճիչ-գոռոցով, հըռհըռոցով...» /էջ40/

իրականում հոմանիշ է Լռությանը:

Թումանյանի գրի մեջ բնականորեն զուգադրվում են Աղմուկը և Լռությու-

նը: Դժվար է պատկերացնել աղմուկի ու լռության համատեղման ավելի հնարամիտ կերպ. Սաքոյի շուրջը գիշեր է, լռություն, իսկ նրա ներաշխարհում երևակայական-հոգեկան աղմուկ է: Թումանյանի գրչի տակ այսպես է փաստվում Աղմուկի ու Լռության լեզվամտածողական հոմանիշությունը: «Լռեցի Սաքոյի» տեքստը ապացուցում է Աղմուկ-Լռություն հոմանիշային զույգի և **քաղաքակրթական գոյությանը** դրանց՝ երկուսի, հականիշությունը: Հենց այս պատճառով է, որ Սաքոն թումանյանական տեքստում ոչ թե ֆիզիկապես է մեռնում, ինչպես Անուշը համանուն պոեմում, այլ հատկապես քաղաքակրթապես. նա կորցնում է քաղաքակրթական գոյության նախապայմանը՝ բանականությունը: Ձայները կան, դրանք մինչևիսկ Խոսք են, բայց այնպիսի խոսք, որը մնում է որպես անապատում կանչողի ձայն. **Ասողին Լսող** չկա (Սաքոյի ընկերն այդ օրն իր հետ չէ), այսինքն՝ եթե խոսքը կա առանց լսողի, ապա խախտվում է ներդաշնակությունը, որովհետև չկա քաղաքակրթական լինելության կողմերից մեկը. և Սաքոն կորցնում է բանականությունը՝ այն, ինչը մարդ արարածին հավասարակշռում է մարդկային (քաղաքակրթական) գոյության հետ. ահա թե ինչու է «Լռեցի Սաքոն» տեքստում Հովի. Թումանյանի հերոսն այս անգամ մեռնում ոչ թե ֆիզիկապես (Անուշ), այլ հատկապես խելագարվում է, այսինքն՝ **մեռնում է քաղաքակրթապես**: Եվ «Հառաչանքի» ծերունին էլ քաղաքակրթական լինելության բացակայության պատճառով է բողոքում, թե իրենցն ասում են ու քեզ չեն լսում:

Սաքոյի **մենախոսությունն** արդեն իսկ բացառում է «Ասողին լսող է պետք» լեզվամտածողական բևեռներից մեկը.

Բայց խուլ ու խավար օդում էս գիշեր

Մենակ է Սաքոն ու **չունի ընկեր** /էջ 37/ :

Լռեցի Սաքոյի խելագարվելու պատճառը լռությունն է. նա ուզում է խախտել լռությունը, այսինքն՝ ձայները տեղափոխել քաղաքակրթական դաշտ, որտեղ ասողին լսող կա, բայց

Մենակ է Սաքոն ու **չունի ընկեր**,

այսինքն՝ բացառված է քաղաքակրթական գոյությունը, այդ պատճառով էլ խախտվում է նրա հոգեկան հավասարակշռությունը:

Ամեն ինչ սկսվում է Սաքոյի մենակությունից, այսինքն՝ այն իրավիճակից, որը բացառում է քաղաքակրթական գոյության նախապայմանը՝ ասողին լսող է պետք: Չկա ընկերը՝ Խոսակիցը, Լսողը:

Սաքոյի վերջը քաղաքակրթական մահ-վախճան է. նա խելագարվում է: Գործում է **Լռություն – Մահ** համընկալումը:

Ինչ կատարվում է Սաքոյի աչքերի առջև՝ լռության մեջ է. նա մտածմունքի մեջ է, բայց առկա է մահվան լեզվամտածողական հոմանիշությունը՝ **լուռ**-ը, **լռեց**-ը, **ձայն չլինել**-ը.

Ձեն-ձուն չըկա:
Միայն ահավոր լռության միջում.../էջ39/ :
Կամ՝
Բուխարու կողքին լուռ թինկը տըված
Մտածում է նա...ու մին էլ, հանկարծ.../էջ37/:

Լռությունն այնքան խորն է ու մթին, որ
Գիշերվան հովից տերև՞ն է դողում,
Երկչոտ մուկի՞կը վազեց պուճախում,
Թե ոչխարների թույլ մընչոցն էր այն-
Սաքոյին թվաց, թե մի ոտնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի վըրա,
Կանգնեց ու լռեց...
Ականջ դրավ նա.../էջ38/:

Այս լռեց-ն ու կանգնեց-ը լռության ու կյանքի կանգառի՝ մահվան զուգորդումն են, «Լռեցի Սաքոն» տեքստում՝ հատկապես քաղաքակրթական մահվան համընկալումները:

Այսինքն՝

Խոսքը ձայնի (ընդհանրապես գոյության) այն մակարդակն է խորհրդանշում, երբ այն լսող ունի, այսինքն՝ Խոսքը միայն այն դեպքում կա, երբ ասողին լսող կա: